եւ Վանանդի եւ մեր երկրի յարակից ուրիշ երկիրների միջեւ։ Այլ էր սակայն մեր տպաւորութիւնը, երբ Ջաւախքից Ախալցխա անցանք։ Տարբերութիւնը զգալի էր — բնա-աշխարհագրական տեսակէտից։ Է՛լ աւելի մեծացաւ այդ տարբերութիւնը, անճանաչելիութեան աստիճան, երբ Աբասթուման եւ Բորժոմ անցանք։ Ախալցխան մի տեսակ անցողական տեղ է կազմում, մի օղակ՝ Հայկական Բարձրաւանդակի (մէջն առնելով նաեւ Ջաւախքը) եւ Վրաստանի հովիտների միջեւ։

Երբ շատ տարիներ յետոյ նորէն առիթ ներկայացաւ ինձ այս անգամ արդէն Թիֆլիսի Բորժոմ գծով բարձրանալու անտառապատ Բակուրիանիի կատարը, որի այն կողմը արդէն Ջաւախքն է տարածւում, դարձեալ շօշափելի կերպով զգացի Հայկական Բարձրաւանդակի եւ Վրաստանի հովիտների միջեւ եղած բնա-աշխարհագրական մեծ տարբերութիւնը։

LXV

Եւ այսպէս, բնակչութեան ազգային կազմը նկատի ունենալու լինինք, թէ բնա-աշխարհագրական տեսակէտը՝ անկարելի է Ջաւախքը պոկել Հայաստանի մարմնից։ Պատմական կողմը, ասացինք, որչափ որ յօգուտ Վրաստանի է խօսում, այնչափ նաեւ՝ յօգուտ Հայաստանի։ Զծանրանանք այդ կէտի վրայ. նախ որ՝ պատմական տեսակէտով առաջնորդուելը հողային-պետական խնդիրներում, իրաւամբ համարւում է ժամանակավրէպ։ Եւ երկրորդ՝ նոյն այս էջերում ընկ. Ա. Ջամալեան բաւականաչափ հանգամանօրէն ծանրացել է խնդրի եւ այդ կողմի վրայ, մի կողմ, որ՝ համարւում է գլխաւոր զէնքը վրացիների ձեռքում, «հիմնաւորելու» համար իրենց նկրտումը Ախալքալաքի վերաբերմամբ։

Տեսանք նաեւ, որ Ախալքալաքի ազգաբնակութիւնը զբաղւում է նոյն այն հիմնական տնտեսութիւններով, ինչ որ՝ Հայաստանի դրացի գաւառները։ Այլեւս ո՞ւր է մնում ուրեմն «տնտեսական սերտ կապը» Վրաստանի եւ Ջաւախքի միջեւ ու, ընդհակառակը, մերժւում նման կապ Հայաստանի եւ Ջաւախքի միջեւ։ Մի տեսակէտ, որ ոչ միայն ամէն կարգի վրացիներն են հրապարակ հանում չարունակ, բոլշեւիկ լինին նրանք թէ մենշեւիկ (չյիշելու համար արդէն միւսներին), այլ եւ յաճախ թութակում են նրանց հայ համախոհները։

Աւելի ճիշդ պիտի լինէր նրանց ասածը, ի հարկէ, եթէ հարցը այսպէս դնէին պարզապէս, թէ՝ Վրաստանը կարիք ունի Ջաւախքին — նրա հացահատիկներին եւ արօտավայրերին։ Այդ տարբեր բան է, ի հարկէ։ Տեսանք արդէն, որ Ղարաբաղի վերաբերմամբ էլ նոյնն է Ատրբէջանի նկատմամբ տնտեսական հիմը։

Ուրիշ խօսքով՝ ե՛ւ մէկ, ե՛ւ միւս դէպքում մի-մի գաղութի դեր պիտի խաղան մեր հարեւանների համար հայկական բնագաւառները։ Բայց երբ հարցը այդպէս դրուի, հեշտ է նրան մօտենալ եւ տալ պատասխան։ Մի բան, ի հարկէ, որ չեն անում մեր հարեւանները, քաջ գիտենալով, որ «կարիքի» հարց բարձրացնելու պարագային Հայաստան շատ աւելի կարիքների — իրական եւ արդար — խնդիր կը դնի սեղանի վրայ։

«Տնտեսական կապ», բայց նաեւ — նո՛ր հիմնաւորումն բանի կցման — Ջաւախքի «հակումը» դէպի Թիֆլիս, դէպի Վրաստան, ինչպէս որ յար եւ նման խօսք է լինում միշտ՝ Ղարաբաղի «հակման» մասին դէպի Բագու եւ Ատրբէջան։ Տեսանք արդէն վերջին պնդման բուն արմատը։ Շատ աւելի խղճուկ է Ջաւախքի մասին ասածը։

Եթէ, ընթերցող, դուք չէք անցել Հայաստան-Ջաւախք-Վրաստան ճանապարհը, եթէ, միւս կողմից, տեսականապէս էլ ծանօթ չէք նրանց շաղկապող տեղագրական պայմաններին, վերցրէ՛ք Անդրկովկասի քարտէսը եւ ինքներդ ստուգեցէք։ Ու պիտի տեսնէք անմիջապէս, քարտէսը կարդալով, որ անհեթեթութիւն է պնդելը, թէ Ջաւախքը «հակուած է» դէպի Հայաստան։ «Հակում» ասելով ուզում են հասկանալ տնտեսական-առեւտրական ձգտումն դէպի մի երկրամաս։ Հաղորդակցութեան միջոցները վճռական դեր են խաղում այդ խնդրում։ Կատարելագործուած ճամբաները (երկաթուղի եւայլն) կարող են դիւրութեամբ մի գաւառի «հակումը» ուղղել այսինչ կամ այնինչ կողմը եւ, ընդհակառակը, շեղել միւս կողմից։ Կապեցէ՛ք Ղարաբաղը երկաթուղով Հայաստանի հետ, զարգացրէ՛ք Զան-